



ՏՕՆԵՐԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Ճիտէյտէի մեծ շուկան ամէնօրեայ գնումի վայր չէր մեզի համար: Եղանակային էր: Որովհետեւ տօնական օրերը յատկանշական էին Հալէպի մէջ, նախապատրաստութիւնն ալ համապատասխան էր: Նորի եւ տարբեր ըլլալու հասկացողութիւն մը կար, որու շուրջ անհամաձայնութիւն չէր թուեր ըլլալ ժողովուրդի խաւերուն մէջ: Գլխաւոր տօները անկասկած կրօնական էին: Մեծ Զատիկ - Յարութեան Տօն եւ Պգտիկ Զատիկ - Ս. Ծննդեան Տօն: Կաղանդը իր անկախ էութեամբ տեղի չէր տար. ինկած ըլլալով արեւմտեան եւ հայկական Ծնունդներու միջեւ, տօներու գագաթնակէտն էր հայ գաղութին համար: Կաղանդի ծառերը տարեգլխուն համար կը պճնուէին, նուէրները Կաղանդի գիշերը կը փոխանակուէին եւ ընտանեկան ճոխ եւ փարթամ սեղանները նոր տարին դիմաւորելու համար կը պատրաստուէին: Յարգանք կար բոլոր տօներու հանդէպ: Աւանդութիւններու հանդէպ գուրգուրանք եւ հետեւողութիւն: Ամբողջ տարին իսկ Աստուծոյ տունը ոտք չկոխող անհատը երկիւղածութեամբ եկեղեցի կը փութար: Ժողովուրդը խումներամ իր ներկայութեամբ կը խճողէր եկեղեցիներն ու անոնց գաւիթները: Եւ ամէն ոք իր նորագոյնը կ'ընծայէր: Նորի հասկացողութիւնը Աստուծոյ մատուցուելով կ'արդարանար:

Ծաղկազարդի կամ Զատիկուայ առաւօտուն, ուշադրութեան անխուսափելի առարկայ էր Կաթողիկէ դաւանանքի պատկանող, սպիտակ, ուշագրաւ, նոր եւ մաքուր զգեստներու մէջ պարուրուած պարման-պարմանուիներու տողանցքը դէպի եկեղեցի: Մերն ալ նոր էր անշուշտ, ոտքէն մինչեւ գլուխ: Մենք աւետարանական էինք եւ ընտանեկան ընդունուած սովորութեամբ կանոնաւորապէս ամէն կիրակի ընտանեօք եկեղեցի կը յաճախէինք: Բայց տօնական օրերուն մեզ ալ ուրիշ կիրակիներէ զանազանողը տօնական օրերու վերազգեստաւորումն էր: Այդքան ակնյայտ էին տօնական օրերը եւ անոնց համար տարուած ծնողական լուրջ նախապատրաստութիւնը: Աւետարանական ժառանգութեամբ միշտ հպարտ, հայրս եւ մայրս ի սկզբանէ իրենց հինգ զաւակները դրած էին «կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատենը» ուղիին վրայ: Եւ այդ ուղին, հօրս եւ մօրս համար, անպայման կ'ընդգրկէր Մայր Եկեղեցին: Էմմանուէլ եկեղեցոյ պաշտամունքի աւարտին, մեր ձեռքերէն բռնած անոնք կ'ուղուէին Սալիպէի Սրբոց Քառասնից Մանկանց մայր եկեղեցին ուր, մեր կանուխ տարիքի տօնական օրերու այցելութեամբ, ընտելացած էինք անմահին պատարագին, զգլխիչ խունկին, պլպլացող մոմի լոյսին եւ սրբազան շարականին:

Խոհանոցներն ալ տարբեր էին: Ընչաքաղցութիւնն ու որկրամոլութիւնը սովորաբար հեռու էին տուներէ: Բայց տօնական օրերու սեղանները ի հարկէ որ տարբեր ըլլային: Նոս ալ նորին օրէնքը կա՛ր: Ընդհանրապէս բացակայ ձուկն ու հնդկահաւը այդ օրերուն իրենց պատուական տեղը կը գրաւէին սեղաններու կեդրոնը: Անոյշ գինին միայն այդ եղանակին կը հոսէր մեր տան մէջ, իսկ արաբական պատուական բախլավան կը թագաւորէր

բոլորին: Մեծ Պահքի աւարտին, աւանդական խթումները լրջախոհ խոկումներու առիթ կը ստեղծէին, ուր մեծերը, հաւաքուած ընտանեկան սեղանի մը ջերմութեան շուրջ, կը պատմէին անցեալէն եւ կը բացատրէին օրուան խորհուրդը, յաճախ փոքրերը ձանձրացնելու գնով եւ ի հեճուկս մեր մանկական չարութիւններուն: Նուէրն ու խաղալիքը բացակայ էին Ծնունդէն ու Յարութիւնէն: Փրկչին Ծնունդը եւ Խաչեալին Յարութիւնը նուէրն էր համայն մարդկութեան, որու հանդէպ ջերմեռանդ հաւատքի, սրտաբոլի փառաբանութեան եւ արժանի պաշտամունքի պահը հարկաւոր էր տարանջատել անլուրջ խաղի եւ նիւթապատտութեան բոլոր փորձութիւններէն: